ՈՐՈՇՈՒՄ N 61

26 դեկտեմբերի 2019 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 15-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 15-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (հաստատված Հայաստանի հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն որոշմամբ) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
   «4. ԵՊՀ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին):»
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Գ. Ա. Մուրադյան**